ԵՄ-ՄՈԼԴՈՎԱ ԵՎ ԵՄ-ՎՐԱՍՏԱՆ ՔՀ ԵՐԿԿՈՂՄ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՄ-ՄՈԼԴՈՎԱ ԵՎ ԵՄ-ՎՐԱՍՏԱՆ ՔՀ ԵՐԿԿՈՂՄ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՄ-ՄՈԼԴՈՎԱ ԵՎ ԵՄ-ՎՐԱՍՏԱՆ ՔՀ ԵՐԿԿՈՂՄ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առաջարկություններ շրջանակային համաձայնագրերի իրականացման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավվածության որակը բարելավելու վերաբերյալ՝ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի կառավարությունների, ազգային պլատֆորմների և քաղաքացիական հասարակությունների, ինչպես նաև ԵՄ կառույցների համար

Այս զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Նյութի բովանդակության համար պատասխանատվությունն են կրում միայն Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, Ազատական ակադեմիա հիմնադրամը և «Պրոմո ԼԵՔՍ» միավորումը: Զեկույցի բովանդակությունը ոչ մի կերպ չի կարող ընկալվել որպես Եվրոպական միության դիրքորոշման արտահայտում:

Այս նախագիծն իրականացվել է Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի (ԱԼԳ ՔՀՖ) դրամաշնորհների վերատրամադրման ծրագրի շրջանակներում: ԱԼԳ ՔՀՖ-ն իր դրամաշնորհների վերատրամադրման ծրագրի շրջանակներում աջակցում է ԱԼԳ ՔՀՖ անդամների տարածաշրջանային այն նախագծերին, որոնք նպաստում են Ֆորումի առաքելությանն ու նպատակներին:

Դրամաշնորհների վերատրամադրման դոնորներն են Եվրոպական միությունը և Ժողովրդավարության ազգային հիմնադրամը:

2017 թվականին հայտարարված դրամաշնորհի ամբողջական գումարը կազմում է 290.000 եվրո: Դրամաշնորհները հասանելի են Արևելյան գործընկերության և Եվրոպական միության երկրների ՔՀԿ-ների համար:

Աջակցության հիմնական ոլորտներն են ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները, տնտեսական ինտեգրացիան, շրջակա միջավայրը և էներգետիկան, մարդկանց միջև շփումները, սոցիալական և աշխատանքային քաղաքականությունները»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայացվող առաջարկությունները մշակվել են Արևելյան գործընկերության (ԱԳ) Քաղաքացիական հասարակության ֆորում (ՔՀՖ) դրամաշնորհային ծրագրի միջոցով ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ-Մոլդովա և ԵՄ-Վրաստան ՔՀ երկկողմ պլատֆորմների փորձի կիրառումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցության հիմնադրամի (Հայաստան) կողմից՝ «Պրոմո-ԼԵՔՍ» միավորման (Մոլդովա) և Ազատական ակադեմիա հիմնադրամի (Վրաստան) հետ համատեղ, և ուղղված է Եվրոպական ինտեգրման ու Ասոցացման համաձայնագրերի իրականացման շուրջ քաղաքացիական հասարակության և կառավարության միջև համագործակցության ոլորտում Վրաստանի և Մոլդովայի փորձի ուսումնասիրմանը:

Ծրագիրն իրականացնող գործընկերները մի շարք խորքային հարցազրույցներ են անցկացրել Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի ազգային իշխանությունների ներկայացուցիչների, ԵՄ պատվիրակությունների և քաղաքացիական հասարակության դերակատարների հետ, համատեղ վերլուծել են ՔՀՖ ազգային պլատֆորմների և ԵՄ-Վրաստան ու ԵՄ-Մոլդովա երկկողմ քաղաքացիական հասարակության պլատֆորմների փորձը, ինչպես նաև երկրորդային հետազոտություն են իրականացրել երեք երկրներում իշխանությունների ու քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը կարգավորող գործող պաշտոնական փաստաթղթերի վերաբերյալ:

Արդյունքում մշակվել է երեք երկրների ազգային իշխանություններին և ԵՄ կառույցներին ուղղված առաջարկությունների փաթեթ, որով առաջարկվում է պլատֆորմների գործունեության բարելավում:

Վրաստանի և Մոլդովայի փորձի վերլուծության, ինչպես նաև հայաստանյան փորձագետների ու ԱԳՆ-ի հետ անցկացված հարցազրույցների հիման վրա ծրագրի միջոցով մշակվել են առաջարկություններ Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրվելիք Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրականացման շրջանակներում նախատեսվող համագործակցության վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդհանուր առաջարկություններ

1. Հատկապես այնպիսի գործընթացում, ինչպիսին ՀԸԳՀ-ի իրականացումն է, անհրաժեշտ է սահմանել քաղաքացիական հասարակության այն սուբյեկտը, որը կկարողանա դառնալ ՀԸԳՀ-ի իրականացման գործընթացում Հայաստանի իշխանությունների և եվրոպական կառույցների միջև հաղորդակցության ու համագործակցության շրջանակներում քաղաքացիական հասարակությունը ներկայացնող ինստիտուտը: Ներկա փուլում Հայաստանի ազգային պլատֆորմը (ՀԱՊ) քաղաքացիական հասարակության հիմնական սուբյեկտն է, որն ունի ինստիտուցիոնալ կարողություններ, պատմություն և ՀԸԳՀ-ի իրականացման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավվածության փիլիսոփայության հետ համընկնող ձևակերպված առաքելություն:

2. Ինչ վերաբերում է քաղաքացիական հասարակության հնարավոր գործառույթներին, ապա քաղաքացիական հասարակությունը կարող է իրականացնել երեք հիմնական գործառույթ՝

ա) ՀԸԳՀ-ի իրականացման մոնիթորինգ, որը կարող է ներառել ոլորտային բարեփոխումների, իրավական մոտարկման մոնիթորինգ, ինչպես նաև ընդհանուր ռազմավարական մոնիթորինգ՝ հատուկ շեշտադրելով առաջնահերթություններ սահմանելը, իրականացման գործողությունների ծրագրեր մշակելը և արդյունքներն ու վերջնարդյունքները ձևակերպելը,

բ) Ոլորտային փորձագիտական կարողությունների ձևակերպում և ներդրում որոշումներ կայացնողների շրջանում: Սա շարունակական գործընթաց է, որի համար անհրաժեշտ է քաղաքացիական հասարակությանը կոնկրետ ոլորտների, ուղղությունների ու գործընթացների համար պատասխանատու պետական ճյուղային կառույցների հետ երկխոսության մեջ ներգրավումն ապահովող որոշակի ինստիտուցիոնալ դաշտ,

գ) ՀԸԳՀ-ի և ԵՄ-Հայաստան հարաբերությունների ավելի լայն ձևաչափի վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում: Այս գործառույթի

համար պահանջվում է ԵՄ-ի, ինչպես նաև ԵՄ կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրերի հետ ինտենսիվ հաղորդակցություն, և այն պետք է ուղղված լինի ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակներում առանձնահատուկ խնդիրները կարգավորելուն, հաջողություններն ու ակնկալվող արդյունքներն արձանագրելուն: Այս գործառույթը ներառում է ինչպես հենց քաղաքացիական հասարակության շրջանում իրազեկության բարձրացումը, այնպես էլ քաղաքացիական հասարակության օգտագործումը որպես օղակ՝ հասարակության լայն շերտերին տեղեկություններ հասցնելու համար:

3. Անհրաժեշտ է Հայաստանի ազգային պլատֆորմը ներգրավել ՀԸԳՀ-ն առավել ազդեցիկ դարձնելու գործընթացում՝ հատկապես յուրաքանչյուր ոլորտում մանրամասն առաջնահերթությունների, մոնիթորինգի մեխանիզմների մշակման, արդյունքների, փոխկապակցված թեմաների և աշխատանքի ձևաչափերի բացահայտման գործընթացներում: Կարևոր է նաև ապահովել ՀԸԳՀ-ի միասնական գործիքային դաշտ՝ Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ասոցացման օրակարգերի նմանությամբ, քանի որ դա հնարավորություն կտա ապահովելու պայմանականություն և արդյունքների առավել հստակ ձևակերպում, ինչպես նաև առավել արդյունավետ կդարձնի իրականացման մոնիթորինգի գործընթացը:

4. ՀԸԳՀ-ով նախատեսված՝ քաղաքացիական հասարակության երկկողմ պլատֆորմի արդյունավետությունն ապահովելու համար խիստ անհրաժեշտ է այն կապել ՀԱՊ-ի հետ: Դրա հնարավոր մեխանիզմներից են՝

ա) Երկկողմ պլատֆորմում ՀԱՊ-ի զգալի ներկայությունն ապահովելը՝ ՀԱՊ-ի համար երկկողմ պլատֆորմում քվոտա սահմանելու միջոցով,

բ) Երկկողմ պլատֆորմը ՀԱՊ-ի հորիզոնական կառույց դարձնելը՝ լիազորելով ըստ անհրաժեշտության, տվյալ ժամանակահատվածում քննարկված կոնկրետ թեմաների հիման վրա նշանակել աշխատանքային խմբերի անդամներին և ապահովելով այն ՔՀԿ-ների մասնակցության հնարավորությունը, որոնք պատրաստակամ են ներդրում ունենալ ՀԸԳՀ-ի իրականացման գործում, սակայն չեն ցանկանում ներգրավվել որևէ ինստիտուցիոնալ դաշտում,

գ) Երկկողմ պլատֆորմի՝ ԵՄ վրա հիմնված ՔՀԿ-ների թվում այնպիսի ՔՀԿ-ներ ներգրավելը, որոնք ակտիվորեն գործում են Հայաստանում և երկրի իրավիճակի վերաբերյալ խոր գիտելիք ունեն: Կարևոր է ապահովել այդ ՔՀԿ-ների ոլորտային բազմազանությունը: ՀԱՊ-ի անդամները, ինչպես նաև ԱԼԳ ՔՀՖ-ն կարող են արժեքավոր աղբյուր լինել ԵՄ վրա հիմնված համապատասխան ՔՀԿ-ների բացահայտման և ներգրավման համար:

Առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կառավարությանը

1. Հայաստանին անհրաժեշտ է ՀԱՊ-ի և Հայաստանի իշխանությունների միջև ներքին երկկողմ համաձայնագրերի խիստ ձևաչափ, որով ոչ միայն կուրվագծվեն համագործակցության սկզբունքները, այլև կձևակերպվեն կողմերի

պարտականություններն ու պարտավորությունները և կսահմանվեն համագործակցության մեխանիզմներն ու ժամկետները:

2. Ճյուղային նախարարությունների և ազգային պլատֆորմի աշխատանքային խմբերի միջև ոլորտային երկխոսության շրջանակներում պարբերական հանդիպումների՝ Վրաստանի փորձը լիովին կիրառելի է Հայաստանի նկատմամբ, և դրանով կարող է ապահովվել շարունակական ու բովանդակային մասնակցային գործընթաց:

3. ՀԸԳՀ-ի թափանցիկ իրականացումն ապահովելու համար օգտակար կլիներ «Վրաստանի բաց հասարակություն» հիմնադրամի կողմից մշակված http://aa.ge/en/ կայքի նմանությամբ մշակել www.ՀԸԳՀ.am կայքը, որտեղ կտեղադրվեն ԵՄ *Acquis*-ների հետ մոտարկման համար նախատեսված բոլոր իրավական ակտերը, և որը հնարավորություն կընձեռի ապահովել հետադարձ կապ և ստանալ պատասխաններ: Բացի դրանից կայքի հայաստանյան տարբերակը կարող է տեղեկություններ ներառել ՀԸԳՀ-ի շրջանակներում իրականացված այլ միջոցառումների վերաբերյալ, մանրամասներ ներկայացնել Ուղղակի բյուջետային աջակցության վերաբերյալ և այլն:

4. Անցած տասնամյակի ընթացքում Հայաստանը ներգրավվել է ինտեգրման մի քանի տիրույթներում (ԵՀՔ, ԱԼԳ, ՀԶՄ, ԲԿԳ և այլն), որոնք ուղղված են երկրին իր զարգացման առաջնահերթությունները սահմանելու և դրանց իրականացման մեխանիզմները բացահայտելու հարցում աջակցելուն: Ըստ քաղաքացիական հասարակության մի շարք դերակատարների՝ այս գործընթացն ավելի շատ իմիտացիոն էր, քան իրական, և դրա արդյունքը կարգավորիչ դաշտի ու մարդկանց տեսլականի միջև հսկայական տարբերությունն էր: ՀԸԳՀ-ն հայաստանյան հասարակությանն ու պետությանը հնարավորություն է ընձեռում նախաձեռնել ավելի խոր և հայեցակարգային քննարկումներ բարեփոխումների, օրենսդրության, իրավական ակտերի մշակման գործընթացի ու կարգավորիչ դաշտի պարզեցման միջոցների վերաբերյալ: Այս հնարավորությունը պետք է օգտագործվի ժամանակին բաց թողնված վիթխարի հնարավորությունները վերականգնելու նպատակով:

Առաջարկություններ ԵՄ կառույցներին

1. ԵՄ կողմից քաղաքացիական հասարակությանը տրամադրվող ֆինանսավորման վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացի համար անհրաժեշտ է թափանցիկության ու հստակության առավել բարձր մակարդակ. ֆինանսավորման վերաբերյալ որոշումների հիմքում ընկած սկզբունքները հաճախ անհստակ են: Դա հնարավոր է ապահովել ֆինանսավորման համար ԵՄ դիմող՝ ընտրված ՔՀԿ-ների կարողությունների զարգացման նշանակալի մակարդակ ապահովելու միջոցով: ՀԱՊ-ն կարող է կարևոր պլատֆորմ դառնալ այդ գործունեության համար:

2. Խիստ անհրաժեշտ է ամրապնդել և ինստիտուցիոնալացնել ԵՄ պատվիրակության և ՀԱՊ-ի միջև հաղորդակցությունը: ՀԱՊ-ի և ՔՀԿ-ների ընդհանուր շփումները Պատվիրակության տարբեր ստորաբաժանումների հետ հաճախ հանգեցնում են ոչ պատշաճ հաղորդակցության, եթե բացակայում է

Պատվիրակության ինչպես քաղաքական, այնպես էլ գործառնական ստորաբաժանումների ինստիտուցիոնալ ներգրավվածությունը:

3. Խիստ անհրաժեշտ է նաև հիմնել ԵՄ-ի, Հայաստանի իշխանությունների և քաղաքացիական հասարակության միջև պարբերական հաղորդակցության եռակողմ ձևաչափ, որը հնարավորություն կտա հարցերը քննարկել իրենց բարդությունների ամբողջականությամբ՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին:

4. Կարևոր է զարգացնել հայաստանյան ՔՀԿ-ների կարողությունները՝ կապված ԵՄ մրցույթներին դիմելու գործընթացի, հայտերի գնահատման, ԵՄ մրցույթների հրավերների բովանդակության հիմնական սկզբունքների և այլնի հետ: ՀԱՊ-ն կարող է դառնալ այս գործողությունների համար հիմնական պլատֆորմ:

Դա իրականացնելու նպատակով առաջարկվում է մշակել այնպիսի փաստաթուղթ, որով կհստակեցվեն Հայաստանի կամ երկրների խմբերի, ինչպես օրինակ՝ ԱլԳ համար կիրառելի՝ PRAG-ի սկզբունքները: Հստակեցման կարիք ունեցող ոլորտներում կարող են նշվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

ա) Դիմող ՀԿ-ների մասին ընդհանուր տեղեկությունները. ե՞րբ են գրանցվել կամ սկսել գործունեությունը, ունե՞ն բավարար փորձ և այլն,

բ) Հաստատված ֆինանսավորում ունեցող ՀԿ-ների ստուգման գործընթացը. ինչպիսի՞ հարցեր պետք է նրանք ակնկալեն,

գ) Ֆինանսավորում ստացող ՀԿ-ների կարողությունների զարգացումը. ինչպիսի՞ գործողություններ է ԵՄ-ն նախատեսում նրանց համար՝ իրենց գործունեությունը բարելավելու առումով,

դ) Մրցույթներին մասնակցության հարցում ճկունության մակարդակը. որո՞նք են որևէ բաց մրցույթի միջոցով չհատկացվող՝ ծառայությունների համար ֆինանսավորման շեմերը,

ե) ԵՄ ծրագրերի ղեկավարների ներգրավվածության մակարդակը. որո՞նք են փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, այսինքն՝ ո՞ր գործողությունները կարող են իրականացվել միայն ԵՄ պատվիրակության կողմից հաստատվելուց հետո,



և որոնք կարող են իրականացվել առանց հաստատման,

զ) Բյուջեի վերաբաշխման հարցում ճկունությունը. որոնք են Հայաստան/ԱԼԳ պայմաններին վերաբերող առավել պատշաճ կանոնները:

Այս և մյուս հարցերը կարևոր է հստակեցնել ըստ տեղական հանգամանքների, քանի որ PRAG-ը միայն ընդհանուր ուղեցույց է, որը որոշ դեպքերում շատ ճկուն է տեղական հանգամանքների նկատմամբ: Եթե ԵՄ-ն սահմանափակումներ կիրառի այս տեսակի նախաձեռնությունների իրականացման առնչությամբ, ապա կարողությունների զարգացման ծրագրեր իրականացնող դրամաշնորհների ենթաշահառուները ԵՄ համապատասխան կառույցների կողմից պետք է ուղղորդվեն այդ խնդիրները լուծելուն և ԵՄ-Հայաստան հարաբերությունների ոլորտում ՀԱՊ-ի ու քաղաքացիական հասարակության այլ սուբյեկտների հետ սերտորեն համագործակցելուն:

Խորհուրդ է տրվում նաև առավել մանրամասնորեն ուսումնասիրել ԵՄ հայտատուների և Հայաստանում նրանց գործընկերների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները. այն հայտատուները, որոնք չեն աշխատել Հայաստանում, պետք է առավել կայացած և հայտնի գործընկերներ ունենան, որպեսզի կարողանան լրացնել փորձագիտական կարողությունների բացը: Եթե ԵՄ հայտատուներն աշխատել են Հայաստանում և ունեն դրական պատմություն, ապա սա նրանց ընդհանուր առմամբ չի վերաբերում:

Բացի դրանից խորհուրդ է տրվում հանդիպումներ կազմակերպել ԵՄ գնահատողների և չընտրված հայտատուների միջև՝ անմիջական անձնական հետադարձ կապ ապահովելու, ընտրված առաջարկների հետ համեմատություն անցկացնելու նպատակով, որպեսզի դրանց հեղինակներն ավելի լավ հասկանան իրենց թերացումները:

Կարծիք կա, որ սա կարող է շահերի բախում առաջացնել, սակայն Հայաստանում ՀԿ-ների զարգացման համար լավագույն միջոցը հնարավորին չափ բաց միջավայրն է:

1. Ուղղակի բյուջետային աջակցության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը պետք է դարձնել առավել մասնակցային և ՀԱՊ-ի միջոցով ներգրավել

քաղաքացիական հասարակությանը: Սա կարող է իրականացվել ՀԱՊ-ի ներկայացուցիչներին Ուղղակի բյուջետային աջակցության ծրագրերի Ղեկավար կոմիտեներում ներգրավելու միջոցով:

2. Պետք է քայլեր ձեռնարկվեն՝ ապահովելու համար ՀԱՊ-ի, Հայաստանի կառավարության և ԵՄ պատվիրակության՝ ՀԸԳՀ-ի առնչությամբ հաղորդակցության ռազմավարությունների՝ առնվազն մասնակի համաձայնեցումը և ԵՄ-ի՝ Հայաստանին տրամադրվող աջակցության ու Հայաստանի հետ համագործակցության ընդլայնումը: Հաղորդակցության ռազմավարությունը պետք է ուղղված լինի ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակներում իրականացվող գործընթացների և առավել լայն հարցերի շուրջ ապատեղեկատվության դեմ. օգտատիրոջ համար առավել հարմարավետ և ռազմավարական առումով առավել հեռահար՝ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ պետք է ձեռնարկվեն ԵՄ-Հայաստան համագործակցության իրական արդյունքների վերաբերյալ:

3. ԵՄ կողմից ֆինանսավորվող շարունակական ծրագրերի և ՀԱՊ-ի միջև հաղորդակցությունը կարող է կարևոր նշանակություն ունենալ ինչպես նրանց թափանցիկության ու հաշվետվողականության մակարդակը բարձրացնելու, այնպես էլ լայն հասարակայնության՝ Հայաստանում ԵՄ աջակցության վերաբերյալ իրազեկության բարձրացման տեսանկյունից:

Առաջարկություններ ՀԱՊ-ին և քաղաքացիական հասարակությանը

1. Պետք է իրականացվի նշանակալից կառուցվածքային բարեփոխում, որով ՀԱՊ-ն կհարմարեցվի նոր իրավիճակին, մասնավորապես՝

ա) Աշխատանքային խմբերը հզորացնելը և նրանց աշխատանքն առավելապես արդյունքահեն ու կայուն դարձնելը,

բ) Մոնիթորինգի, քարոզչության և իրազեկության բարձրացման ոլորտներում ՀԱՊ-ի անդամների գործունեությունը համակարգող հորիզոնական փոխկապակցված կառույցները զարգացնելը,

գ) ՀԱՊ հաղորդակցության ռազմավարություն և ծրագիր մշակելը,

դ) ՀԸԳՀ-ի իրականացման փուլում ՀԸԳՀ-ի բովանդակության վերաբերյալ ներքին և հանրային քննարկումներ նախաձեռնելը և ՀԸԳՀ-ն առավել ազդեցիկ դարձնելու վերաբերյալ առաջարկներ մշակելը,

ե) Կարողությունների զարգացման այնպիսի գործողություններ իրականացնելը, որոնք ուղղված են մի կողմից ՔՀԿ-ներին ԵՄ-Հայաստան համագործակցության (ՀԸԳՀ, Մարդու իրավունքների շուրջ երկխոսություն, GSP+, Ստեղծարար Եվրոպա և այլն) տարբեր բովանդակային հայեցակետերին ծանոթացնելուն, մյուս կողմից՝ մոնիթորինգի, քարոզչության և իրազեկության բարձրացման կարողությունները զարգացնելուն:

2. ՀԱՊ-ն պետք է քայլեր ձեռնարկի հասարակության առավել լայն շերտերին պլատֆորմում ներգրավելու ուղղությամբ՝ առևտրային միավորումների, աշխատանքային միությունների ու տեղական ՔՀԿ-ների միջոցով:

3. ՀԱՊ-ն պետք է ստանձնի իր անդամների *արտադրանքը* տարածողի դերը: Իր անդամների մշակած *արտադրանքն* առավել արդյունավետորեն կիրառելու նպատակով՝ պլատֆորմը կարող է մշակել իր անդամների *արտադրանքը* մեկ ձևաչափում միավորելու մեխանիզմ: Դա կարող է իրականացվել մասնավորապես մոնիթորինգի զեկույցների ու քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների միջոցով:

4. Երկրի ամբողջ տարածքում տեղեկությունների առավել արդյունավետ շրջանառություն ապահովելու նպատակով ՀԱՊ-ն պետք է ստեղծի տարածքային ներկայացուցչություններ՝ այս գործառույթն իր՝ կայացած տարածքային անդամներին պատվիրակելով:

5. ՀԱՊ-ի և ԵՄ-Հայաստան երկխոսության մեջ ներգրավված քաղաքացիական հասարակության այլ սուբյեկտների միջև ինտենսիվ հաղորդակցություն պետք է լինի: Մասնավորապես, ՀԱՊ-ի հաղորդակցությունը ԵՄ-կողմից ֆինանսավորվող տարբեր ծրագրեր իրականացնող ՔՀԿ-ների հետ կարող է ապահովել ԵՄ-ին վերաբերող տեղեկությունների լրացուցիչ հոսք: ՀԱՊ-ն կարող է հանդես գալ նաև որպես ԵՄ-կողմից ֆինանսավորվող՝ կարողությունների զարգացման ծրագրերի համար պլատֆորմ՝ այդ ծրագրերը կապելով ՀԱՊ անդամ ՔՀԿ-ներին՝ ինչպես ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման առումով, այնպես էլ ԵՄ՝ քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ կարողությունների զարգացման առումով (առավել մանրամասն՝ տես ԵՄ կառույցների վերաբերյալ առաջարկությունների 2-րդ կետը):

6. ՀԱՊ-ն պետք է ավելի ակտիվորեն կիրառի ներկայացուցչական մեխանիզմները՝ Պլատֆորմի անդամներին Ուղղակի բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակներում ձևավորված Ղեկավար կոմիտեներում ներգրավելու առումով: Սա թույլ կտա ընդլայնել տեղեկությունների շրջանառությունը՝ բարձրացնելով ՔՀԿ-ների՝ գործընթացների վերաբերյալ իրազեկության մակարդակը, ինչպես նաև ապահովելով կոնկրետ ծրագրերի և գործողությունների վերաբերյալ որոշում կայացնողներին առաջարկություններ ներկայացնելու հնարավորություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկություններ ազգային պլատֆորմին և քաղաքացիական հասարակությանը

1. Անհրաժեշտ է զարգացնել ազգային պլատֆորմը (ԱՊ)՝ Մոլդովայում նրա ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնելու և դիրքի առումով:

2. Քարտուղարության գրանցումը և ազգային պլատֆորմի գործունեության համար ֆինանսների հավաքագրումը Քարտուղարության միջոցով՝ կանոնավոր հանդիպումներ, փորձագիտական կարողությունների կուտակում և հաղորդակցություն ապահովելու նպատակով:

3. ՔՀԿ-ների անդամությունն ԱՊ-ին պետք է առավել ակնհայտ լինի. ԱՊ-ի ներկայացվածությունն իր անդամ կազմակերպությունների կողմից կարևոր

է պլատֆորմը Մոլդովայում կենտրոնական դերակատար դարձնելու հարցում:

4. Առանձին կազմակերպությունների փորձագիտական կարողություններն էական նշանակություն ունեն, սակայն Մոլդովայում քաղաքացիական հասարակությունը միավորման ջանքերի կարիք ունի, և ԱՊ-ն կարող է կարևոր դերակատար դառնալ քաղաքացիական հասարակության միավորման հարցում:

5. Կարող է կիրառվել ոլորտային հանդիպումների ու տարեկան համաժողովների՝ Վրաստանի փորձը, կարելի է քննարկել նաև Քարտուղարությունը գրանցելու՝ Հայաստանի փորձը:

Առաջարկություններ Մոլդովայի կառավարությանը

1. Մշակել հաղորդակցության եռակողմ մեխանիզմ ԵՄ-ի, կառավարության և Մոլդովայի քաղաքացիական հասարակության միջև՝ անմիջական երկխոսությունը դյուրացնելու համար՝ դրանով իսկ վերացնելով զուգահեռ հաղորդակցությունը:

2. Հիմնել քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցության ինստիտուցիոնալ տիրույթ, որը հնարավորություն կտա համապատասխան կերպով ձևափոխելու Մոլդովայի ազգային պլատֆորմը (ՄԱՊ), երկկողմ պլատֆորմը և ԵՄ-Մոլդովա երկխոսության մեջ ներգրավված քաղաքացիական հասարակության մյուս սուբյեկտներին:

3. Ստեղծել ոլորտային երկխոսության ձևաչափ՝ ներգրավելու համար համապատասխան ճյուղային նախարարություններին և ՄԱՊ-ի աշխատանքային խմբերում ներկայացված ոլորտային ՔՀԿ-ներին, որոնք պարբերաբար կհաղորդակցվեն և տեղեկություններ կփոխանակեն ոլորտային բարեփոխումների վերաբերյալ:

4. Քաղաքացիական հասարակության հետ համագործակցության փորձը կիրառել ՄԱՊ-ի հետ համագործակցության ընդհանուր սկզբունքները ձևակերպելու համար՝ ՄԱՊ-ի հետ փոխըմբռնման հուշագիր մշակելու և ստորագրելու միջոցով:

5. Կազմակերպել պարբերական ռազմավարական խորհրդակցություններ՝ ուղղված Ասոցացման

համաձայնագրի իրականացման ընդհանուր գործընթացի առնչությամբ քաղաքացիական հասարակության հետ հետադարձ կապ ապահովելուն:

Առաջարկություններ Մոլդովայում ԵՄ պատվիրակությանը

1. Ապահովել, որ Պատվիրակությունը մշտական հաղորդակցություն ունենա ՄԱՊ-ի հետ՝ հիմնելով ԵՄ պատվիրակության և ՄԱՊ-ի միջև կանոնավոր խորհրդակցությունների մեխանիզմ:

2. Աջակցել ՄԱՊ-ին կարողությունների զարգացման հարցում՝ պլատֆորմին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

3. Ապահովել, որ ԱլԳ և ԵՄ-Մոլդովա հարաբերությունների հիմնական զարգացումների վերաբերյալ քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցությունը լինի պարբերական:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վրաստանում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական մասնակցության ամրապնդումը սերտորեն կապված է եվրոպական ինտեգրման գործընթացի հետ: Քաղաքացիական մասնակցության մշակույթի և համապատասխան հաստատությունների զարգացումը հաճախ ներառվում է ԵՄ-ի և Վրաստանի միջև հարաբերությունների օրակարգը ձևավորող բոլոր համաձայնագրերում ու ծրագրերում:

Քաղաքացիական հասարակության երկու ամենակարևոր պլատֆորմները, որոնք պետք է ապահովեն քաղաքացիական հասարակության և իշխանությունների միջև երկխոսություն երկրի զարգացման ամենակարևոր հարցերի վերաբերյալ, ստեղծվել են ԵՄ-Վրաստան Ասոցացման համաձայնագրի և ԵՄ Արևելյան գործընկերություն ծրագրի շրջանակներում: Կարևոր է նաև ընդգծել ԵՄ-ի ջանքերին զուգահեռ՝ Վրաստանի կառավարության՝ արդեն առավել մեծ պատրաստակամությունը տարբեր հարցերի շուրջ քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու հարցում: Դրա մասին են վկայում Վրաստանի ազգային պլատֆորմի կողմից Վրաստանի կառավա-

ության և Խորհրդարանի՝ Եվրոպական ինտեգրման հարցերով հանձնաժողովի հետ ստորագրված հուշագրերը, ինչպես նաև համանման հուշագրերը, որոնք առանձին ստորագրվել են Վրաստանում գործող մյուս կոալիցիաների և ՔՀԿ-ների կողմից: Այնուամենայնիվ, քաղաքացիական մասնակցության դրսևորման մակարդակը և ձևերը հաճախ որոշիչ չեն քաղաքականության վրա քաղաքացիական հասարակության ազդեցության հարցում: Իշխանությունները հաճախ հաշվի չեն առնում մի շարք հարցերի առնչությամբ քաղաքացիական հասարակության տեսակետներն ու առաջարկությունները:

Թեև զգալի առաջընթաց է գրանցվել, սակայն դեռևս առկա են բազմաթիվ բարդ մարտահրավերներ՝ կապված քաղաքացիական մասնակցության կայունության և արդյունավետության հետ: Իշխանությունները հաճախ քաղաքականության շրջափուլերի իրականացման մեջ քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության վերաբերյալ միասնական համակարգային մոտեցում չեն դրսևորում: Բացի դրանից ՔՀԿ-ները հավասար հնարավորություններ չունեն ակտիվորեն մասնակցելու քաղաքական որոշումների կայացման գործընթացներին՝ նույնիսկ հասարակական նշանակության սուր հարցերի դեպքում, որը լավ գործելակերպ չէ:

Հարկ է նշել, որ քաղաքացիական մասնակցության ազդեցությունն ու արդյունավետությունը մեծ մասամբ չեն գնահատվել, ինչպես նաև չեն կազմվել համապատասխան վիճակագրական տվյալներ, երբևէ չի իրականացվել գործընթացի վերաբերյալ քննադատական վերլուծություն և գնահատում, ինչը զգալիորեն կբարելավեր գործընթացի արդյունավետությունը:

Համարժեք հմտությունների ու որակների ձեռքբերումն ինչպես քաղաքացիական ծառայողների, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար շարունակում է մնալ մարտահրավեր, որը խոչընդոտում է քաղաքացիական հասարակության մասնակցության՝ հնարավորինս հետևողական ու թիրախային դառնալուն:

Հատկանշական է, որ ակտիվ քաղաքացիական ներգրավվածության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովումն այն ռազմավարական հարցերից է, որին ավելի մեծ ուշադրություն պետք է հատկացնի ինչպես կառավարությունը, այնպես էլ քաղաքացիական հասարակությունը: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, որոշ դեպքերում անբավարար ֆինանսական ռեսուրսներն անհնարին են դարձնում շատ կարևոր միջոցառումների իրականացումը, որն իր հերթին բացասաբար է ազդում քաղաքացիական մասնակցության գործընթացի վրա:

Առկա մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու համար անհրաժեշտ է, որ կառավարությունը հաստատուն քաղաքական կամք դրսևորի քաղաքականության մշակման, իրականացման և մոնիթորինգի գործընթացներում քաղաքացիական հասարակության ներգրավվածության հնարավորություններն ընդլայնելու հարցում: Մյուս կողմից, կարևոր է էլ ավելի խորացնել համագործակցությունը քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների միջև և զարգացնել նրանց կարողությունները՝ ընդլայնված հանրային քննարկումների միջոցով քաղաքական որոշումների կայացման գործընթացում

քաղաքացիական հասարակության մասնակցության ամենաարդյունավետ գործիքները մշակելու և ներդնելու նպատակով:

Առաջարկություններ ազգային պլատֆորմին և քաղաքացիական հասարակությանը

1. Ամրապնդել ներքին համակարգումն ու համագործակցությունը՝ փորձագիտական կարողություններն ու հետադարձ կապը բարելավելու նպատակով,

2. Ամրապնդել ՔՀԿ-ների և նրանց շահառուների միջև հաղորդակցությունը՝ Ասոցացման համաձայնագրի իրականացման գործընթացում հանրային և մասնագիտական խմբերի առավել արդյունավետ ներկայացուցչությունն ապահովելու նպատակով,

3. Ընդլայնել քաղաքացիական հասարակության տարբեր պլատֆորմների միջև համագործակցությունը,

4. Ամրապնդել Արևելյան գործընկերության երկրների և ԵՄ անդամ պետությունների կազմակերպությունների համակարգումն ու համագործակցությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ,

5. Ապահովել աշխատանքային խմբերի ներկայացուցչության առումով փորձագիտական կարողությունների հավասար որակ՝ կարողությունների զարգացման միջոցառումների, նոր ՔՀԿ-ներ ներգրավելու, միջազգային կազմակերպություններին և ԵՄ գործընկեր կազմակերպություններին ներգրավելու միջոցով,

6. Ապահովել ԵՄ պատվիրակության և ԵՄ կառույցների հետ առավել պարբերական հաղորդակցություն,

7. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար ապահովել առավել շատ տեղեկություններ և վերապատրաստում քաղաքացիական մասնակցության և մեթոդների վերաբերյալ,

8. Մշակել քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների միջև առավել սերտ հաղորդակցություն և առավել շատ տեղեկությունների փոխանակում՝ երկկողմ հանդիպումների որակը կտրուկ բարելավելուն ուղղված համատեղ համապատասխան նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու նպատակով,

9. Ակտիվ քննարկումներ սկսել քաղաքացիական հասարակության ֆինանսական կայունությունը, այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսավորման հնարավորությունները բարելավելու մեխանիզմների վերաբերյալ,

10. Բարելավել Վրաստան-ԵՄ քաղաքացիական հասարակության պլատֆորմի հաղորդակցությունը ԵՄ-Վրաստան Ասոցացման խորհրդի, Ասոցացման հանձնաժողովի և Ասոցացման հարցերով խորհրդարանական հանձնաժողովի հետ,

11. Ապահովել Ասոցացման պլատֆորմի և ԵՄ Արևելյան գործընկերության

կարողությունների առավել արդյունավետ կիրառումը ՔՀԿ-ների կողմից՝ քարոզարշավներում, լոբիստական գործունեության մեջ և քաղաքական որոշումների կայացման գործընթացներում առավել ինտենսիվ մասնակցության նպատակով:

Առաջարկություններ Վրաստանի կառավարությանը

1. Քաղաքացիական ծառայողների և որոշում կայացնող առանձին սուբյեկտների համար ապահովել առավել շատ տեղեկություններ և վերապատրաստում քաղաքացիական մասնակցության գործիքների և մեթոդների վերաբերյալ,

2. Մշակել երկկողմ հանդիպումների որակը բարելավելու մեխանիզմներ՝ քաղաքացիական հասարակության հետ առավել սերտ հաղորդակցության և առավել շատ տեղեկությունների փոխանակման համար,

3. Քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովել ոչ միայն քաղաքականության մոնիթորինգի և գնահատման, այլև քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում, ինչը կնպաստի բարելավված քննարկումներին,

4. Ամրապնդել համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ՝ հատկապես այն ոլորտներում, որտեղ քաղաքացիական հասարակությունը կարող է զգալի աջակցություն տրամադրել (հետազոտություն, իրազեկության բարձրացում, փորձագիտական վերլուծություն և այլն),

5. Համապատասխան վիճակագրություն կազմել քաղաքացիական մասնակցության վերաբերյալ՝ դրա արդյունքները գնահատելու և առկա գործելակերպերը բարելավելու նպատակով,

6. Հետադարձ կապ ապահովել Վրաստանի ազգային պլատֆորմի կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ՝ ՎԱՊ-ի և կառավարության միջև ստորագրված համագործակցության հուշագրում ամրագրված հաղորդակցության որակը բարելավելու նպատակով,

7. Խորհրդարանական հանձնաժողովներին՝ ստեղծել աշխատանքային խմբեր՝ ՔՀԿ-ների ներգրավմամբ, նրանց տրամադրել նպատակային տեղեկություններ և

ապահովել նրանց ներգրավվածությունն օրինաստեղծ գործընթացին,

8. Ներդնել իշխանությունների կողմից առաջարկված օրենքների նախագծերի քննարկման նպատակով քաղաքացիական հասարակության հետ նախնական աշխատանքային հանդիպումների գործելակերպը՝ հետադարձ կապ և քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցություն ապահովելու նպատակով,

9. Խորհրդարանին՝ ԵՄ հետ օրենսդրական ներդաշնակեցման գործընթացի համար մշակել ժամկետներ ներառող տարեկան գործողությունների ծրագիր՝ օրենքների նախագծերը քննարկելու համար ողջամիտ ժամկետներ սահմանելու, ինչպես նաև թափանցիկության առավել բարձր մակարդակ և քաղաքացիական հասարակության պատշաճ մասնակցություն ապահովելու նպատակով,

10. Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև համատեղ քննարկումներ իրականացնել և ապահովել դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությանն ուղղված համակարգված ջանքեր,

11. Քննարկումներ սկսել ՔՀԿ-ներին Վրաստանի պետական բյուջեի միջոցով ֆինանսավորելու հնարավորությունների վերաբերյալ:

Առաջարկություններ ԵՄ կառույցներին

1. Առավել ինտենսիվ դարձնել ջանքերը, որոնք միտված են նպաստելու Վրաստանի ՔՀԿ-ների համագործակցությանը մի կողմից Արևելյան գործընկերության երկրների ՔՀԿ-ների հետ, մյուս կողմից՝ ԵՄ անդամ պետությունների քաղաքացիական հասարակության հետ,

2. Ֆինանսական աջակցություն ապահովել ԵՄ-Վրաստան Քաղաքացիական հասարակության պլատֆորմին,

3. Ներդնել ինստիտուցիոնալ աջակցության հնարավորություններ՝ ուղղված ՔՀԿ-ների կայունության ամրապնդմանը,

4. Բարելավել Վրաստանում ԵՄ ներկայացուցչության և քաղաքացիական հասարակության միջև հաղորդակցությունն ու համագործակցությունը քաղաքականության մշակման գործընթացում,

5. Ամրապնդել ԵՄ-կառավարություն-ՔՀԿ-ներ եռակողմ համագործակցության ձևաչափը,

6. Հիմնել ՎԱՊ-ի մասնակցության լրացուցիչ մեխանիզմ՝ ուղղված ԵՄ-Վրաստան Ասոցացման խորհրդի նիստերում Վրաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցչության ապահովմանը,

7. Ապահովել ԱլԳ երկրների հետ կանոնավոր հանդիպումների ձևաչափի մշակումը: